

ԲԵՐԱԿՐԻՆԵՅԱ ՄԵՍԿԻՄԱՆ

ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

2 հուլիսի

ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին



Ս. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ հաժսակ արք. Պարսամյանի եւ Բոստոնի Ա. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Առաքել քահանա Ալեքսյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ ուրախությամբ հաստատելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապես սիրով է ընդունում ուխտի եկած իր զավակներին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը հորդորեց ուխտավորներին շքեղաշնորհությամբ հաղորդակցվել հայրենիքի սրբություններին, որոնք կերտվել են իրենց հայրերի կողմից՝ Զորհուստի եւ Նրա հրաշափառ Հայրության հանդեպ ունեցած սիրով եւ հավատքի զգացումներով՝ կարեւորելով նաեւ այն, որ յուրաքանչյուր հայորդու համար ուղեւորությունը դեպի Հայաստանն պետք է ընկալվի իբրեւ ուխտագնացություն:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը համոզվածությամբ հայտնեց, որ Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այցելությունը կոգեշնչի ու կգործացի նրանց եւ կներշնչի հայրենիքի:

7 հուլիսի **ՀՀ ԱՆ Իրեակատարողական վարչության ղեկին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետ, գեներալ-մայոր Արթուր Օսիկյանին՝ ուղեկցությամբ քրեակատարողական հիմնարկների հովվության պատասխանատու Ռուբեն վրդ. Չարգարյանի:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի քրեակատարողական հիմնարկների վիճակին եւ վարչության գործունեությանը, քննարկվեցին նաեւ հիմնարկներում իրականացվող հոգեւոր սպասավորության հետ առնչված հարցեր:

Նորին Սրբությունը կարեւորեց քրեակատարողական հիմնարկներում ազատագրվածներին հոգեւոր խնամքը՝ ընդգծելով, որ ստեղծված հովվությունն այդ առումով պատասխանատու առաքելություն ունի: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց Ռուբեն վարդապետին եւ 10 հոգեւոր սպասավորներին՝ նրանց նվիրյալ եւ հետեւողական աշխատանքին համար: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց ԶԿՎ վարչության պետին՝ հովվությանը ցուցաբերվող աջակցության համար:

Իր հերթին պրն Արթուր Օսիկյանն ազատագրվածների հոգեւոր կյանքի կազմակերպման

հանդեպ հարգանքով ու սիրով կրթել ու դաստիարակել նոր սերունդներին, պահպանել եւ պաշտպանել այդ ոգին նրանց մեջ:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ իր հովվապետական այցելությունների ժամանակ մշտապես տեսել է ամերիկահայության զորավոր հավատքը եւ անսակարկ սերն ու նվիրումը համայն հայության հոգեւոր կենտրոնի նկատմամբ: Անդրադառնալով Սփյուռքի առջեւ ծառացած մարտահրավերներին՝ Նորին Սրբությունը պատգամեց ներկաներին հայաշունչ պահել իրենց կյանքը, հայոց լեզուն մշտապես հնչեցնել իրենց ընտանեկան հարկերից ներս եւ հավատքով, արդյունքով, բարի ու աստվածահաճո գործերով զորացնել Մայր Եկեղեցին, պայծառացնել տիրախնամ թեմը:

Հանդիպման ընթացքում Գարեգին Բ Հայրապետը նաեւ պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնց վերաբերում էին Մայր Աթոռի առաքելությանն ու հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեությանը:

Ուխտավորները Մայր տաճարում մասնակցեցին Պատարագի, ապա այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:



առումով կարելու նկատեց հոգեւորականների դերակատարությունը՝ փաստելով նրանց պարբերական այցելությունների դրական ներգործությունը: Այս առիթով ԶԿՎ վարչության պետը նաեւ շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ոլորտի խնդիրներին նկատմամբ որսերվող մշտական ուշադրության համար: Չրույցի ժամանակ քննարկվեցին Մայր Աթոռի եւ ԶԿՎ վարչության միջեւ համագործակցության առավել զարգացման եւ ընդլայնման հնարավորությունները:

7 հուլիսի

Զրային Տեստության ղեկավար կոմիտեի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Եւրոպական եկեղեցական կազմակերպությունների եւ քաղաքական կազմակերպությունների նախագահ Արսեն Հարությունյանին:

Չրույցի ընթացքում խոսվեց կոմիտեի գործառնությունների մասին, մասնավոր անդրադարձ կատարվեց ջրի ազգային ծրագրին եւ ջրային ռեսուրսների գործառնությանը:

Ի պատասխան Վեհափառ Հայրապետի հարցումների՝ Զրային տեստության պետական կոմիտեի նախագահը լուսաբանություններ տվեց ջրամատակարարման համակարգերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով տարվող աշխատանքների,

ինչպես նաեւ երաշտի սպառնալիքի տակ գտնվող գյուղական համայնքներում ջրային ռեսուրսների բաշխման վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ծանոթանալով ոլորտի հիմնախնդիրներին, ողջունեց դրանց հաղթահարման ուղղությամբ կառույցի կողմից ձեռնարկվող քայլերը: Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց կոմիտեի նախագահ Արսեն Հարությունյանին՝ ընդգծելով նրան վստահված ոլորտի կարեւորությունը հայրենիքի զարգացման եւ առաջընթացի համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:



9 հուլիսի

ԱՄՆ հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմերի կամավորական ծրագրերի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի երիտասարդաց միության «Ծառայություն Հայաստանին» եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի երիտասարդաց միության «Առաքելություն դեպի Հայաստան» կամավորական ծրագրերի մասնակիցներին՝ ուղեկցությամբ խմբերի ղեկավարներ Թադեոս քահանա Բարսեղյանի (Մինեսոտայի Ս. Ասահկ եկեղեցի) եւ Գրիգոր քահանա Չաքար-

յանի (Վալիֆոռնիայի Ս. Կարապետ եկեղեցի):

Հանդիպման սկզբում քահանա խմբերը Նորին Սրբությանը ներկայացրեցին խմբերի՝ Հայաստան այցելության նպատակը եւ կամավորական ծառայության ոլորտները, որից հետո երիտասարդներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Շարունակությունը՝ էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ԱՄՆ հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմերի...

Սկզբը՝ էջ 1
Վեհափառ Պապապետն իր ուրախությունը հայտնեց երիտասարդ հայրողիկների Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ գոհունակությամբ հաստատելով, որ Սփյուռքի հայոց թեմերի կողմից հաճախ կազմակերպվող այցելությունները Հայաստան իրենց անցնելի հետք են թողնում երիտասարդների կյանքում՝ առիթ ընձեռելով նրանց զորանալու իրենց ինքնությունը, ճանաչելու եւ հաղորդակցվելու հայրենիքի ազգային եւ հոգեւոր արժեքներին: Գարեգին Բ Կաթողիկոսը պատգամեց հայրողիկներին հպարտությամբ կրել հայի անունը, հպարտության զգացումով վկայել այն արժեքների մասին, որոնք դարերի ընթացքում կերտվել են հայ ժողովրդի կողմից, եւ իրենց ինքնության բարձր գիտակցությամբ իրագործել սեփական առաքելությունն ազգային կյանքում:

Նորին Արքեպիսկոպոսն ողջունեց երիտասարդներին կողմից տարբեր հաստատություններում իրականացվող կամավորական աշխատանքը՝ կարեւորելով այն առաջին հերթին իրենց քրիստոնեական նկարագրի ձեւավորման համար: Վեհափառ Պապապետը գնահատեց նաեւ նրանց ծառայակալության եւ պատրաստակամության ոգին՝ հորդորելով հավատարմի մնալ տերուհավանդ պատվիրաններին, կյանքի ընթացքում մշտապես իրենց կարողություններն

ու հմտությունները ի սպաս դնել մարդասիրական ու բարեփոխական կամավորական ծրագրերին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 20-րդ դարի պատմությանը՝ մասնավորապես խոսելով Հայոց ցեղասպանության եւ խորհրդային իշխանության տարիներին Եկեղեցու կրած կորուստների եւ հաղթահարած դժվարությունների մասին: Նորին Արքեպիսկոպոսն նաեւ ներկայացրեց Հայաստանի անկախացումից հետո Եկեղեցու կողմից իրականացված լայնածավալ գործունեությունը եւ ազգագույն ծրագրերը:

Հանդիպմանը Վեհափառ Պապապետը պատասխանեց ներկայների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու առաքելությանը, Սփյուռքի երիտասարդությանը Եկեղեցու եւ հայրենիքի շուրջ համախմբելու ուղիներին, ինչպես նաեւ Եկեղեցական կյանքին կանանց մասնակցությանը:

Վերջում Նորին Արքեպիսկոպոսն հայրողիկներին մարտնչեց լինել ազգի արժանի զավակներ եւ կարողանալ իրենց ազգանկեր ծառայությամբ օգտակարություն բերել իրենց համայնքներին ու հայրենիքին:

Հանդիպումից հետո երիտասարդները Մայր տաճարում մասնակցեցին Պատարագի:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությանը Ոսկան քին. Հովհաննիսյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածին «Էջմիածին» մամագրի խմբագրությունում ստանձնած պարտականություններից, ծառայության եւ կոչվել ԱՄՆ հայոց արեւելյան թեմում՝ ընդ իշխանությանը թեմական առաջնորդ համակարգը: Պարսպանի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Դերենիկ արքեպ. Սահակյանը, ազատվելով Գետրգյան հոգեւոր ճեմարանում ստանձնած պարտականություններից, կմեկնի Ֆրանսիա՝ ուսումնառության Փարիզի Կաթոլիկ համալսարանում:

Չարեք քահանա Անդրյանը, ազատվելով Շիրակի թեմում ստանձնած պարտականություններից, հոգեւոր ծառայության եւ կոչվել Արարատյան հայրապետական թեմում:

18 հուլիսի

Ուխտավորների Գերմանիայից



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Քյոլն քաղաքի համալսարանի մի խումբ կաթոլիկ ու բողոքական աստվածաբանների եւ գիտնականների:

Խմբի ղեկավար եւ Կաթոլիկ Եկեղեցու՝ Գերմանիայի Եպիսկոպոսաց ժողովի խոսնակ Մաթթիաս Կոպպը Նորին Արքեպիսկոպոսը ներկայացրեց ուխտավորներին՝ ուրախություն հայտնելով Հայաստան եւ Մայր Աթոռ իր հերթական այցի առիթով:

Այնուհետեւ ուխտավորներին ողջունեց եւ իր հայրապետական օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Արքեպիսկոպոսն կարեւորեց նման ուխտագնացությունների կազմակերպումը՝ ընդգծելով, որ այսօրինակ այցելությունները, որոնք զգալի են ամրացնելու եւ զորացնելու ազգերի ու Եկեղեցիների միջեւ հարաբերությունները, հաճելի են եւ ոգեւորիչ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում հաստատեց, որ Հայոց Եկեղեցին սերտորեն համագործակցում է այլ Եկեղեցիների հետ՝ իր

ներդրումը բերելով աշխարհում մարդկանց եւ պետությունների խաղաղ գոյակցությանն ուղղված ջանքերում:

Վերջում Վեհափառ Պապապետն ուխտավորներին մարտնչեց բարի կեցողությամբ Հայաստանում եւ վստահեցրեց, որ ուխտավորներն այս օրերին անկասկած կզգան մեր ժողովրդի հյուրընկալ ոգին:

Չորսյի ընթացքում նաեւ անդրադարձ կատարվեց Հայաստանում եւ Սփյուռքում հոգեւոր վերաթուրթյանը, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու ներկայիս գործունեությանը՝ սոցիալական, կրթական եւ քաղաքական ոլորտներում: Նորին Արքեպիսկոպոսը պատասխանեց ներկայների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցաշինությանը, Հայաստանի կյանքին եւ արցախյան հակամարտության կարգավորման հարցում Հայ Եկեղեցու խաղաղարարական առաքելությանը:

Հանդիպմանը ներկա էր Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորչի մայր Եկեղեցու հոգեւոր տեսուչ, ԵԴՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան Եպս. Ժամկոչյանը:

«Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսություն արարողությունը: Պատվավոր մրցանակն այս տարի շնորհվեց կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայ Եկեղեցու շքանշանակիր Տիգրան Մանսուրյանին:

Միջոցառումն սկսվեց Տերուհան արքեպ. Եղիցի հետո «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի մասնակիցներին եւ հյուրերին ողջունեց կինոփառատոնի ինստիտուտի ղեկավար Յուրի Կոլոսովը: Վերջինս հաստատեց, որ կինոփառատոնի պատմության մեջ առաջին անգամ է, որ «Եղիցի լույս» մրցանակաբաշխության միասնական գեղարվեստական խորհուրդը միաձայն ընտրել է Տիգրան Մանսուրյանին: Ընդհանրապես լավ մատերով՝ նա նշեց, որ կարելու է պատվավոր այս մրցանակը հանձնվում է մի մարդու, ով իր մեջ կրում է հոգեւոր, լուսավոր ու հանձնարը: Այնուհետեւ ներկայների ողջունեց ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջանը: Մշակույթի նախա-

րարն անդրադարձ կատարեց այն փաստին, որ հայ մշակույթն իր պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ վերագրությունների վերաբերման առիթներ է ունեցել: Նա, հիշելով մատերու Մանսուրյանի խոսքը, թե՛ «Մենք այդպես էլ չկարողացանք մոտենալ եւ վերցնել Կոմիտասի նետած ձեռնոցը: Ես շատ անհագիստ եմ, երանի եկող սերունդները նույնքան անհագիստ լինեն», Արմեն Ամիրջանը նշեց, «Այսօր ճիշտ նույն պատասխանատվությամբ, սիրելի՛ մատերու, ինչպես դուք եք վերաբերվում հայ երաժշտությանը, նույն պատասխանատվությամբ մենք ուզում ենք հասնել, որ դուք արժանի եք այս մրցանակին եւ ընդհանրապես հայ ժողովրդի սիրուն եւ խոնարհմանը: Թույլ տվեք Ձեզ ասել շնորհակալություն եւ խոնարհվել ձեր տեսակի եւ ձեր ստեղծած արվեստի առջեւ»:

Այս Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեորգ Եպս. Սարգսյանն ընթերցեց հայրապետական վկայագիրը, որում ի մասնավորի ասված է. «Հոգեւոր, մշակութային եւ մարդասիրական արժեքների բարոգույության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մր-

ցանակը «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի առիթով շնորհում ենք հայ ժողովրդի տաղանդաշատ զավակ, կոմպոզիտոր տիար Տիգրան Մանսուրյանին»: Ապա ներկայների ծափողոցներից ներքո պատվավոր մրցանակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը հանձնեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանին:

Տերուհան արքեպ. Եղիցի եւ ազգային երգերի կատարումներով հանդես եկավ Գետրգյան հոգեւոր ճեմարանի «Էջմիածին» երգչախումբը:

Իր սրտի խոսքը ներկայների փոխանցեց պրն Մանսուրյանը. «Ես խորապես զգացված եմ այս ուշադրության համար, որ, ահավասակ, այս բարձր պարգևի ձեռով ինձ է տրվում գոյացած երկու աղբյուրներից, մեկը՝ իմ պաշտելի Էջմիածինի՝ Եկեղեցուց, Վեհափառի կողմից, որի ուշադրությունը ես մշտապես տարիներ շարունակ վայելել եմ վայելում եմ, մյուսը՝ «Ոսկե ծիրան» փառատոնի կողմից», - ասաց մատերու Մանսուրյանը՝ իր խոսքում մասնավորապես ներդրողանալով Կոմիտասի կերպարին Էջմիածնական դպրոցում եւ նրա կա-



րետոր դերակատարությանը հայ մշակույթում: «Էջմիածնի ժառանգն եմ համարում ինքս ինձ՝ իմ հոգեւոր հայրեր կրած հաջադարձի, Փարաջանովի, Դանիել Կարուն, Կահան Տերյանի կողքին, ինձ համար առանձնահատուկ է Կոմիտասը, որը Էջմիածնական դպրոցի մեծագույն հիմքերից մեկն է իմ կյանքում: Եվ բանի որ Կոմիտաս, ուրեմն՝ նախեստաց՝ ճիշտ հիմնավորումը. նա եղավ նորագույն շրջանի կոմպոզիտորական հիմքը: Եվ թե՛ այսօր մենք կանք մեր կոնսերվատորիայով, մեր երգչախմբերով ու նվագախմբերով,

կանք Կոմիտասի կողմից հիմնած դպրոցի արդյունքում», - ընդգծեց հոգեւորական կոմպոզիտորը:

Հանդիսության ավարտին ներկայների մեջ երբեք չի մաշվում եւ հոգիներից դուրս չի գալիս: ...Տիգրան Մանսուրյանը ոչ միայն մեծ կոմպոզիտոր է, այլեւ քաջ անձնավորություն եւ շատ սերունդների համար նմանվելու խորհուրդը», - ասաց Նաթան արքեպիսկոպոսը՝ նշելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս պատվական մրցանակը տրվում է մի անձնավորության, ով հայկականության ժամանակակից մարտնչական եւ նոր հայրենասիրության խորհուրդներն է:

Սրբազանք երկար արեւշատ կյանքի օրեր եւ բեղուն տարիներ մարտնչեց վարպետին, որպեսզի իր հոգու երաժշտության արդյունքը նորանոր սերունդներին հասցնի:



**«Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ
Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետերին**

Հուլիսի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին գեղերգյալ հոգեդուր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն. Ս. Ս. Ս. Գորեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Հերոսիայի» պատվով բարձր շքանշան հանձնվեց Կալվաթայի Ս. Լազարոսի եկեղեցու վարչության փոխատնայտերու տիար Մուսիկ Սոթքիին եւ տիկին Սյուզան Ռուբենի՝ ի գնահատություն նրանց եկեղեցավոր ընթացքի եւ բազմաթյուն վատարկի:

Արարողությունը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, ապա ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանատան ներկերեցակցական հարաբերու-

Նաեւ հնդկահայ գաղութի փոքրաթիվ հայութեան, Հայկաթալիի հայոց մարդասիրական ճեմարանի, Ս. Էջմիածնի և ամենապատեւ Ս. Քաղաքի առաքելալի կթորո Գահակալի՝ ազգիս Վեհափառ Յայրապետի հանդէս կրանք տածած անմարտկոյտ սերը և խախճանիկոյի ոգիւն. - Նշեց հայկաթալը՝ մասնավորապէս ներկա ինքնելոյ կրանք աստվածահոնն և հայրենակեղ գործունեւելոյնը՝ ի ինկոր Յնկաթաթանի փոքրաթիվ հայութեան մէջ ազգային ինքնութեան, հայկական եկեղեցիների և շինությունների պահպանման, Հայկաթալի մարդասիրական ճեմարանի զորացման: Յայլ Չաթաթանի փաստեց նաեւ, որ Վեհափառ Յայրապետի օրինութեամբ Ս. Նաթաթիկ եկեղեցի վարչութիւնը մշտապէս նաեւ եղել է տոր Դելիւս կողոզգած ԶՅ ինկաթաթանութեան կարգի՝ իմա-



թյունների գրասենյակի տնօրեն
Պարույր քհն. Ավետիսյան:

Այնուհետև մեծադպրակների
կատարելության անդադրելու
գործոցից Մայր Աթոռի հերթացա-
կան ժողովական գրասենյակի
տնօրեն Չաքարյան Շվարժ. Բա-
ղումյանը: «Ի՞նձ համար ի՞նչա-
պես մեծ պատիվ է ներկայացնել
մեծադպրակին, որոնց հետ
բախտ մե՛ն ունեցել ծանոթանալ է
ոգի ի բո՞լ պաշտատէ Կալվաթայի
հայոց Մանդակարկական ծննդա-
րան մպաշտոնակարության տա-
րիներին՝ վաղեմիով ոչ միայն
որանք սերը, հարգանքը է, այլ
բողոքական աջակցությունը, ա՞մ

Նադրման պահից աջակցելով
նրա գործունեությանը եւ տար-
բեր ծրագրերին:

«Էջ Միածինն ի Յօրե» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Յովնան եպս Յակոբյանը:

Նվիրյալ հայորդիներին ուղղված սրբատառ կոնդակում մասնավորապես ասված է.

«Այսօր ուրախ առիթն ունենք գնահատանքի խոսք ուղղել Առա-
նիկ Բաղդասարյանին՝ որի անհատական և հասարակական գործունեությունը մեծապես նպաստեց Հայաստանի և Հայ առաքելական եկեղեցու համագործակցության զարգացմանը»։



քելական մեր Սուրբ եկեղեցու արժանավոր գավալիդ՝ Ձեր եկեղեցական արդյունաշատ ծառայությունների համար: Տարիներ շարունակ՝ որպես ավալթայի Ս. Լազարեթ եկեղեցու վարչության ակումբ, Պոլս Ձեր ժամանակն ու փառքդությունները սիրով իր սպասեք երեւում հնդկահայ համայնքի կողմից ստեղծված ազգային, հոգեւոր ու մշակութային ժառանգության անխաթար պահպանմանը: Ուրախ եմ սերծապես, որ Ձեր ազնիվ ջանքերով ու նախաձեռնություններով նախընթաց տարիներին նորոգվեցին ու բարեգործվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու եկեղեցապատկան շինություններ, որոնք շարունակում են իրենց դռները բաց պահել հավատացեցող առեւտրվայելով մեր ժողովրդի գավալների հավատի ու աստվածահաւճ գործերի մասին:

Հայրապետիս համար գոհու-
նակություն է առնել Մ. Ս. Նա-
գարթեի եղեղեցու վարչության ղե-
ստն ընդհանրական աջակցությունը
հայկաթայի հայոց մարդասիրա-
կան ճեմարանին, որի շնորհիվ պ-
պահովվել են լավագույն պա-
մասները՝ երիտասարդ հայորդի-
ների կրթությունը կազմակերպե-
լու համար։ Ձեր պատվածահանում
հանձնառությունները մշտապես
երախտագիտություն լայն պսի-
շեն հնդկապալ համայնքում պա-
սափորդող մեր եղեղեցականներն
ու հավաքասպայները՝ իրենց ա-
ղոթքներում Տիրոջ խնամքն ու
համապապ օրհնությունը հայե-
լու Ձեզ ու Ձեր քնտանիքիս։

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ շքանշանների

Հնորիումից հետո տիար Սուհի Սոթքին եւ տիկին Սյուզան Ռուբենյան այս ուրախալի առիթով իրենց երախտագետ զգացումները փոխանցեցին ներկաներին: Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխա-



տեևապետերը հավաստիացրեցին, որ բոլոր ձեռքբերումները հնչյակահայոց կյանքում արձանագրվել են շնորհիվ Վեհափառ Հայրապետի զորակցության, ում օրհնությանը եւ պիտի շարունակեն իրենց ծառայությունը բերել հոգուտ Հնչյակատանի հայ համայնքի, Հայոց Եկեղեցու եւ հայրենիքի:

Յերեկույթին երաժշտական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռի եւ ԶԲԸՄ-ի հայրեր-դպաց տների սաները:

Կերչում մեծադյալներին եւ
ներկաներին իր օրհնությունը
բաշխեց Նորին Սրբություն Գաբր-
գին Բ Ամենայն Հայոց Կաթողիկո-
սը: Գոհունակություն հայտնելով
Եկեղեցու անդապտանից ներս
արդյունավոր ծառայություն մա-

տուցող հայորդիների պարգևատրաման առիթով՝ Վեհափառ Յարպազի նշեց, իր տրանսպարտապահներն են այն ժառանգության, իր դարերի մեջ Ֆուկյաստանում կերտել են մեծ նախնիների՝ հաստատելով եկեղեցիներ և կրթական հաստատություններ: Նորին Սրբությունը գնահատանով արձանագործել, իր վերջին տարիներին շնորհիվ Ս. Լազարեթ եկեղեցու վարչության նախնանախորդության՝ ամբողջովին նորոգվեցին և պայծառացան Ֆուկյաստանում հայոց տրամադրող՝ շարունակելով իրենց առաքելությունն այս կյանքում, բարեգարգից նաեւ Վալպարայի մարդասիրական ճմարանով: Վերջում, վերստին իր գնահատանով հայտնելով վարչության անդամներին, Նորին Սրբությունը

պատգամեց նույն նախանձախնդրությամբ շարունակել իրենց օգտակար ծառայությունը՝ շահախնամ հարող ու նվիրումով հանձնեալ Բայոց Եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պապականիք արղթքով:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հնդ-

կանտանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանը, ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչներ եւ Մայր Աթոռի պաշտոնեւորները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սկիզբը՝ թիվ 10-12

Մասն այն եղեակյոթն է, որը միշտ վախի զգացում է հաղորդելու մարդուն: Եվթևանագիայի պարագայում այն ոչ թե վախի զգացողություն է, այլ ցանկալի է քառնմալի իրողություններ: Այդ իրողությունը բավական տարածված է եղել Հիմ աշխարհում, որը տառապանքներին ազատվելու միակ միջոցը համարվել է մահը: Այբերտ Եվալայանյան իր «Մահվան հոգեբանություն» գրքում ակտիվ էվթևանագիալ այսպես է առիմանում. «Ակտիվ, որպակա, գործուն էվթևանագիա կատարելիս բժիշկն իրազործուն է անհույսելի իվիվանի մահն արագացնող կատարակաղողված գործողություններն»: Եվթևանագիայի հակառակորդների կողմից այս տարատեսակների տարբերությունը մեկնաբանվում է մի դեպքում թյուլ տալ մեռելն, մյուս դեպքում՝ որպես սպանություն:

Ինչպես սշվեց վերևում, կամավոր եվթախազիան իրականացրեց և հիվանդանոսի և հոսպիտալի համաձայնությամբ: Նա իր կամքն արտահայտում և ախտապես եւ իրավաբանական տեստով, որը լալերուն սկսել և տարածվել վերմուղից այլ շարք երկրներով: Համավորությունն այդ դեպքում պահանջում և որոշակի նկարագրություն, որը կբացառի որոշել երկիմաստություն: Համբար պետք և արտահայտվող բազմից, հստակ և մշակակ, ազատ՝ առանց

**Էվթանազիայի ֆենոմենը
եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության
առանձնահատկությունները**

արտաքին բարոյական, իրավաբանական
հոգեբանական կամ մեկ այլ ճնշման, այլ
էլ՝ լավ տեղեկացվածության հիմքի վրա:

Ոչ կամավոր եվթանազիան իրականացվում է առանց հիվանդի համաձայնության, ինչը չի նշանակում, թե այն հակապատմ է նրա կամքին: Խոսքն այն իրադրության մասին է, երբ հիվանդը նախապես չի արտահայտել իր կամքը կամ չի կարող արտահայտել (գտնվում է կոմայի մեջ)՝ ընդ որում՝ ընթարվում է, որ երբեք եվթանազիայի խնդրի առաջացման պահին հիվանդը ինքնաբերականում ունենար արտահայտելու իր կամքը, նա կզերպատեր մահանա: Այսպիսի իրավիճակներում որոշում ընդունելույն հիվանդի փոխարեն ընտրված է առաջին եղիմակությունը, իսկ երբ ընտանիքի անդամների մեջ համաձայնություն չկա, դատարանի միջոցով կարող է ընտրվել այն անձը, ով հանդես կգա հիվանդի փոխարինող՝ որոշում կայացնելու: Այդ անձը պետք է լավ ճանաչված լինի հիվանդին, իմանա լավ բարոյական

արժեքները, որպեսզի կարողանա այնպիսի որոշում ընդունել, որիս կհամաձայնե՝ հիվանդը եւ նույն որոշումը կընդունե՝ ֆիզիկապես կարող լինելու դեպքում:

Բացի կամավոր եւ ոչ կամավոր էվթա-
նագիայից՝ գոյություն ունի նաեւ վկան
խառնածված էվթանագիա, որը մեծ կե-
րտառություն չունի։ Չկանխամտածված էվ-
թանագիան խղճահարությունից որովհա-
պաւնությունն է այն կարողունակ հի-
վանքների, որոնք ի վիճակի են արտահայ-
տելու իրենց կամքը, բայց հիվանդի կամ-
քին հակառակ կատարվում է էվթանա-
գիան։

Ինչպես կշկեց խախտող շարադրանքում, կենսահույզ այս խնդիրն ունի իր երկար պատմությունը: Հայտնի է, որ անհույս հիվանդները կամ ծանր վիրավորները կլանվեն վերջ դեղը բավականին տարածված երեւույթ է եղել Հին աշխարհում, մասնավորապես՝ Հին Հունաստանում: Այդ է վկայում Պլատոնի «Հանրապետություն» հոդվածում կախարատությունը, ուր լավատորոշը:

104 ցանկալի պետական կառուցվածքի հիմնական գծերը՝ հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ բժշկականը բացառել է խնամեն այն մարդուն, որն այլես ի վիճակի չէ ապրել, եւ պետք է թույլ տալ, որ նա մահանա: Պատժող կարծում է, որ այդ վերաբերմունքը նպաստավոր է եւ հիվանդի, եւ պետության համար:

Ներկայումս եվթանագիայի խնդրի վերաբերյալ հասարակության մեջ առկա է երկու հակադիր մոտեցում՝ ազատական եւ պահպանողական: Կյս երկու կողմերը մերժելիս կամ արդարացնելիս բախվում ենք խնդրի լուծման համար անհրաժեշտ այնպիսի կենսական հարցերի, ինչպիսիք են՝

մարդկանց ազատություն կամ բարոյական իրավունք ունի՝ վարվելու այնպես, ինչպես ինքն է ցանկանում,

բարոյական կարող է համարվել նրա այդ ցանկությունը, երբ այն չի վնասում ուրիշին կամ չի սահմանափակում այլ մարդկանց ազատությունը,

ՀԱՊՈՒՆԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Էջ 4

ՄԱՐԴՈՒ ՏԵՂԸ

Գեղեցիկ եւ արվեստի այդ տեսակին բնորոշ մեթոդով մտազորված թաթե գովազդային պատառն արդեն մի քանի շաբաթ շարունակ գրավում էր անցորդների ուշադրությունը: Երբեմն-երբեմն այդ ճանաչարհով անցնելիս իմ հայացքն էլ ակամայից ընկնում էր մետրոյի կանգառից ոչ շատ հեռու գտնվող բարձր ու սլացիկ շենքի պատից կախված այդ պատառին: Այն ասես վարար անձրևից հետո հարթ, հավասարաչափ աճած կանաչ գազոններում հայտնված ահռելի սուսն լինե՛ր՝ խայտաբղետ գույներով, որն իր վիթխարի չափերով անցորդներին նմանուցում էր համակարգիչների եւ տեխնիկական այլ նորարարությունների մոտադրում եւ աննախադեպ գեղեցիկ մասին: Շատ անցորդներ պատառի հուսադրող այս լուրից ուրախանում էին՝ վառվառացող աչքերով եւ մեկ անգամ լափելով նրա անհամեմատ մեծ տառերը, մյուսները՝ զարմանախառն հիպոստիկ հռետակով՝ մտադրված գեղեցիկ օրերին անպայման այցելել խանութ եւ օգտակար գնումներ կատարել, իսկ ահա մի քանի զբոսաշրջիկ էլ, որոնք թեպետ չէին հասկա-

նում պատառի վրա գրվածը, սակայն լուսանկարչական թվային ապարատներով անմահանում էին նրա առաջ՝ կրկին ու կրկին իրենց հիշողության մեջ ամրագրելով այդ պատառը:

Ես էլ մի քանի վայրկյան պատառի առաջ զամված մնալուց հետո շտապեցի դեպի մետրոյի մուտքը: Անմիջապես զգացի զաղշ ու մի քիչ էլ խեղդող օդը, որն այդքան հատուկ է ստորգետնյա այդ «քաղաքներին»: Նստեցի հենց առաջին պատահած նստարաններից մեկին ու հանկարծ նկատեցի, որ թափառաշրջիկներից մեկը (իմ տպավորությամբ՝ նա դեռ մի քիչ էլ գինով-ցած էր) խոշոր մատիտով մետրոյի պատին մի բան էր գրում: Հետաքրքրությամբ, բայց նաեւ քաղաքավարությունից դրված՝ աչքի պոչով միայն նայեցի. «Մենեկան ասել է՝ «Պաշտպանե՛ք բնությունից ձեզ տրված տեղը»: Հաճելի զարմանքով դիմեցի դեպի արդեն մոտեցող մետրոյի վագոնը եւ այդ օրվա թոհուրթոհի մեջ հասցրի մոռանալ պատահածը:

Բայց ահա հաջորդ առավոտյան, երբ կրկին անցնում էի պատառի մոտով, հիշեցի մետրոյի պատին գրվածը: Որոշեցի ես մեկ անգամ կարդալ այն՝ ավելի լավ մտապահելու նպատակով: Իհա մետրոյի աստիճաններով, մոտեցա սեւ ու խոշոր տառերով գրված նախադասության ու զարմացա. եղածին ավելացել էր մի հետաքրքիր միտք եւս. «Հարցնում ե՞ք՝ ո՞ր տեղը... Մարդո՛ւ տեղը»:



ԵՐԵՐ ԳԵՐԵՉՄԱՆԱՔԱՐԵՐԸ

Տխուր մի առիթի հետ է կապված այս պատմությունը: Ավելի ճիշտ՝ այն պատմություն էլ չէ, պարզապես հիշողություն է, որն ինձ համար դարձել է կյանքի ու մահվան հարաբերությանը որոշակի բովանդակային իմաստ տվող պատմություն: Բոլորսելի գերեզմանատան էի: Տեղի հայ համայնքի ազնիվ հայորդիներից մեկի թաղման կարգը կատարելուց եւ հոգեհացն օրհնելուց հետո որոշեցի մեկ-երկու րոպե քայլել գերեզմանների բնորոշ լուրջության մեջ: Կանաչ ու մաքուր գազոններով պատված մեծ գերեզմանատան վրա հովանի էին անում բարձր ու սաղարթալիտ ծառերը՝ եղեկները՝ վեր խոյացող ու փշոտ իրենց սվինների, մայրիկների՝ երիտասարդ այրիների նման նուրբ իրաններով ու թախծոտ, տխուր կատարներով... Նրանց բոլորի կատես աչքերը, ասես ներքին մի հրամանի ենթարկվելով, սեռեցված էին գերեզմանաքարերի վրա: Քնության ու գերեզմանաքարերի այս ներքին, բայց խոսուն հարաբերությունը գրավեց իմ ուշադրությունը:

Մեկ-երկու քայլ առաջ անցնելով, ասես հետաքրքիր մի հիշատակարան գտած, սկսեցի կարդալ գերեզմանաքարերի վրա առկա արձանագրությունները: Մի տեղ վաղաժամիկ գավակին կորցրած մոր լալգին խոսքերն էին արձանագրություն դարձել, մի ուրիշ տեղ իրենց սիրեցյալ ծնողի հիշատակին ձևավորված բանաստեղ-



ծությամբ էին գավակները զարդարել գերեզմանաքարը: Այսպես հերթով անցա անդենական կյանքի հիշատակարաններով եւ ահա զարմանքով տեսա մի գերեզման, ավելի ճիշտ՝ նույն մարդու շիրմի վրա դրված երեք գերեզմանաքար: Աչքերիս չհավատալով՝ մոտեցա: Առաջին գերեզմանաքարի վրա գրված էր. «Այստեղ են ամփոփված հանգուցյալի բարի ու հիշարժան գործերը», երկրորդի վրա՝ «Աստեղ են հանգում նեղեցյալի մասին նրա հարազատների ու ընկերների բարի հիշողությունները», վերջապես երրորդի վրա՝ «Սույն գերեզմանաքարի տակ նա թողեց իր բոլոր կիսատ գործերը»: Եվ որ առաջին գերեզմանաքարի վրա՝ ոչ մի անուն, ոչ մի նկար... Միայն երեք շիրմաքարերի մեջ տեղում վեր խոյացող խաչի վրա հազիվ նկատելի տառերով արձանագրված էր՝ «... մահկանացու...»:

Շահեմ Ծ. վրդ. ԱՆՆՅԱՆ

Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Սկիզբ՝ էջ 3

- Նա իրավունք ունի՝ ընտրելու իր մահվան ձևն ու ժամանակը եւ
- պե՛տք է արդյոք, որ աջակցություն ստանա այդ գործողության մեջ,
- մարդն իրավունք ունի՝ իր նմանին եւ Աստծո պատկերն ու նմանությունը կրողին կյանքից զրկելու,
- այդ դեպքում ինչպիսի՞ն է բարոյական պատասխանատվություն կրելու խնդիրը, բժիշկը պե՛տք է աջակցի հիվանդին մահանալու նույնիսկ այն դեպքում, երբ առկա է վերջինիս համաձայնությունը եւ խնդրանքը:
- ի՞նչ ազդեցություն կունենա այս աջակցությունը մյուս հիվանդների, հոգեպան ծանր ընկճախտում գտնվող մարդկանց վրա:

Հոլանդիայում դատարանը վճիռ է կայացրել որոշ հիվանդ երեխաների կյանքի նկատմամբ կիրառված եւ ծանր հոգեպան ընկճախտի վիճակում գտնվող անձանց ցանկությանը կատարված Էվթանազիայի համար պատիժ չսահմանել:

Այս երկիրն առաջնորդվում է այն սկզբունքով, որ հոգեբանական տառապանքը մտնում է անհրաժեշտ չափանիշների մեջ, որոնք օրինական են դարձնում բժշկի նման օգնությունը: Եվ, առհասարակ, հասարակության վրա որքանով կամ ո՞ր դեպքերում է ընդունելի տառապալի կյանքն արհեստական միջոցներով երկարաձգել եւ այլ: Էվթանազիան շարունակում է առաջ քաշել անձնական եւ հասարակական արժեքների, անհատի իրավունքի եւ դրա սահմանների, բժշկության նպատակի եւ մեռելի ցանկացող հիվանդների նկատմամբ պարտականություններ ունենալու հարցեր:

Երիտասարդությունը կյանքը դիտում է բարիք՝ իր բոլոր դրսեւորումներում՝ ե՛ւ տանջանքներում, ե՛ւ հաճույքներում:

Կյանքը բարիք է եւ բարիք է մտնում նույնիսկ այն ժամանակ, երբ այն գերազանցապես տանջանք է դառնում կամ նույնիսկ՝ անվերջ տանջանք: Ինքնասպանության կարեւոր դրոշմապատճաններից է տառապանքներից ազատվելը, բայց արդյո՞ք գոյություն ունի սպասվող հանգստությունը: Բրիտանիայում ասում է, որ դա հուսախաբություն է, որը հանգեցնում է ավելի մեծ տառապանքների, բայց արդեն՝ այն աշխարհում:

Հեղուկիզմը (բարոյական դիրքորոշում, երբ մարդու վարքի հիմնականն դրոշմապատճանն ու նպատակը դառնում է հաճույքի ստացումը) արդարացնում է Էվթանազիայի կողմնակիցների՝ տառապանքի եւ հաճույքների վերաբերյալ առաջ քաշած փաստարկները: Եթե հեղուկիստի համար մահը լիակատար անորոշություն է, եւ հնարավոր է նաեւ բացարձակ վերջը, ապա քրիստոնյայի համար կեցության ձեռի փոփոխություն է միայն, կյանքի օրինակի ընթացքի մի հանգրվանը՝ հավերժության անցման ճանապարհին: Սրանցով եւ պայմանավորված կյանքի նպատակի ընկալման երկու տեսակետները, հեղուկիստի համար այս կյանքի հաճույքներն են, քրիստոնյայի համար՝ հոգու փրկությունը: Երբ խոսքը տառապանքների ժամանակ կյանքի կամ մահվան ընտրության մասին է, քրիստոնեական տեսանկյունից հարցը մտնում է հոգու փրկության դաշտ:

Աստված երբեք մարդուն թույլ չի տալիս կրելու առավել տառապանք, քան նա կարող է տանել, եթե ունենա համբերություն եւ ընդունի այն շնորհի ու ուժը, որ Ինքն է տալիս մարդուն: Նրա պայքարի ընթացքում: Երբ Աստված թույլ է տալիս, որ տառապանքը մուտք գործի մարդու կյանք, նա դրանում մեծ բարիք է դնում, որին մարդն արժանանում է այն հաղթահարելու միջոցով: Եթե ամփոփենք տա-

ռապանքի իմաստի քրիստոնեական ողջ Եւթանոզի, ապա այն կարելի է այսպես արտահայտել. տառապանքը բացահայտում է կյանքի խոր իմաստը եւ մարդուն հասկանալու տալիս, որ նա տիեզերքի տեր է, մարդ, ով այսօրվա տեխնիկայով հագեցած ժամանակաշրջանում իրեն Աստված է զգում, եւ ում թվում է, թե ինքը կարող է գերազանցել Աստծո արարչագործությունը:

Հաջորդ փաստարկը, որն առաջին հայացքից շատ հիմնավոր է համոզիչ է թվում, Էվթանազիայի արդարացումն է գթասրտության եւ արդարության միջոցով. Էվթանազիան համարվում է գթասրտություն նրա նկատմամբ, ում օգնում են մահանալ, եւ արդարացի՝ շրջապատի եւ հասարակության նկատմամբ:

Էվթանազիան համարվում է գթասրտություն նրա նկատմամբ, ում օգնում են մահանալ, եւ արդարացի՝ շրջապատի եւ հասարակության նկատմամբ:

Էվթանազիայի կողմնակիցների բարեգուր սպասության տեսությունը մերժվում է քրիստոնեական մտածողության դիրքերից: Էվթանազիայի արդարացման գթասրտության փաստարկը հաճախ կարող է կեղծվել թե՛ հիվանդի հարազատների, թե՛ բժիշկների կողմից. միգուցե հարազատների համար՝ է անտանելի՝ տեսնել հիվանդին այդ վիճակում, եւ հիվանդի հանգիստ մահվան միջոցով փորձում են հենց իրենց ազատել այդ տառապանքներից: Էվթանազիան նման պարագաներում ոչ այն ինչ է, եթե ոչ՝ հեշտ ու եժան ընտրություն:

Իսկ այն դեպքում, երբ Էվթանազիան կատարվում է իրական գթասրտական բողի տակ, պետք է մի բանում համոզված լինել՝ բժիշկը եւ առհասարակ որեւէ մեկը ավելի գթասիրտ չեն, քան Նա, ով մարդկանի եակին է արարել: Աստված



մարդուն կյանք է շնորհել, եւ նա էլ կանխորոշված ժամկետում այն նրանից վերցնում է: Սիրալիկ իմաստական մեջ ասվում է. «Տիրոջ բոլոր գործերը շատ բարի են, եւ Նրա բոլոր հրամանները կատարվում են իրենց ժամանակին. վայել չէ ասել՝ ի՞նչ է սա կամ ինչո՞ւ է սա, քանզի ամեն ինչ պիտի կատարվի իր ժամանակին»:

Բժշկի «գթասիրտ» քայլը չի դադարում սպասություն լինելուց նույնիսկ այն պարագայում, երբ այդ քայլին նրան դրդել է գթասրտության զգացումը, անհուսալի ու ծանր հիվանդին հետագա տառապանքներից ազատելու մարդկային ցանկությունն ու խիղճը: Էվթանազիայի հակառակորդների այս հիմնավորման դեմ առաջ է քաշվել այն հակափաստարկը, որ սարքը պահպանում է միայն կյանքի երեւութականությունը, որը դրսեւորվում է շնչառության եւ արյան շրջանառության ձեռով, այն դեպքում, երբ իրականում մարդը մեռած է, որեւիցե ցավ չի զգում, նրա կենսագործունեությունն արդյուրը՝ ուղեղը, արդեն մեռած է:

18-րդ դարի փիլիսոփա Դեյվիդ Հյումը պնդում էր, որ եթե արհեստականորեն մարդու կյանքին վերջ դնելն օրինազանցություն է Աստծո առջե՛ս՝ իբրեւ կյանք պարգեւտող եւ տնօրինողի, նույնը կարող է ասվել արհեստականորեն որեւէ մեկի կյանքը բժշկական սարքավորումներով երկարաձգելու պարագայում:

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅԻ ՀԱՅԵ

Սկիզբը՝ թիվ 12
ՀԱՍՏ-ն ժամանակին համարվում էր ոչ միայն ԽՍՀՄ-ի, այլև աշխարհի համեմատաբար խիտ բնակեցված տարածություններից մեկը։ Վերջին տարիների տվյալներով՝ 1 քառ./կմ-ի վրա բնակչության խտությունը շրջանների մի մասում ուներ այսպիսի պատկեր։ Մասիս՝ 355 մարդ, Ամասիա՝ 34, Էջմիածին՝ 332, Իջեան՝ 33, Հոկտեմբերյան՝ 265, Թային՝ 31, Արտաշատ՝ 182, Եղեգնաձոր՝ 28, Նաիրի՝ 140, Վայք՝ 20, Արմավիր՝ 140, Սիսիան՝ 20, Հրազդան՝ 121, Ղուկասյան՝ 19, Սեւան՝ 112, Մերի՝ 15:

Հայերի, հայկական դորոցների և առակների թիվը աշխարհում 1966 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ բերված հետքակառույցային

- Հայաստանում՝ 2 030 000, 1471, 531 455:
 - Ադրբեջանում՝ 560 000, 412, 92 000:
 - Կրասնոստանում՝ 550 000, 292, 75 000:
 - Ռուսաստանում՝ 330 000, 22, 16 400:
 - ԱՄՆ-ում՝ 450 000, 2, 300:
 - Ավստրալիայում՝ 15 000, 2, 200:
 - Ավստրիայում՝ 300, 1, 15:
 - Արգենտինայում՝ 70 000, 15, 3 000:
 - Բուլղարիայում՝ 7 000, 2, 700:
 - Բուլղարիայում՝ 25 000, 1, 600:
 - Եգիպտոսում՝ 22 000, 5, 850:
 - Եթովպիայում՝ 1 000, 1, 200:
 - Թուրքիայում՝ 250 000, 30, 158 000:
 - Իտալիայում՝ 15 000, 5, 150:
 - Իրանում՝ 200 000, 57, 20 000:
 - Իրանում՝ 30 000, 4, 3 000:
 - Լիբանանում՝ 180 000, 70, 22 000:
 - Կիպրոսում՝ 3 500, 5, 1 000:
 - Հնդկաստանում՝ 800, 1, 125:
 - Հոլանդիայում՝ 10 000, 4, 1 000:
 - Հունաստանում՝ 11 000, 2, 500:
 - Չիլիում՝ 4 000, 1, 50:
 - Ռումինիայում՝ 8 000, 1, 100:
 - Սիրիայում՝ 150 000, 72, 20 000:
 - Սուդանում՝ 1 000, 1, 100:
 - Ուրուգվայում՝ 15 000, 1, 400:
 - Եթովպիայում՝ 7 000, 1, 150:
 - Ֆրանսիայում՝ 200 000, 2, 100:
 - Մասցած երկրներում և ԽՍՀՄ-ի մյուս հանրապետություններում՝ 374 900:
 - Ընդամենը՝ 5 500 000, 2 489, 804 895:
- Ծանոթ. Հայկական մեջ չեն՝ ա) կիրակոս-րյա դպրոցները (մոտ 300, 15 000 տոկոսով), բ) բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Հայերի թիվը աշխարհում՝ ըստ 1979 թ. սկզբների

Հայաստան՝ 2 725 000, Ռուսաստան՝ 365 000, Կրասնոստան՝ 448 000, Ադրբեջան՝ 475 000, Թուրքմենիա՝ 27 000, Հյուսիսային Օսիա՝ 13 000, Չեչեն-Ինգուշական ԻՅ՝ 15 000, Ադիգեա՝ 6 500, Աբխազիա՝ 73 000, Աջարիա՝ 16 000, Նախիջևանի ԻՄ՝ 3 400, ԼՂԻՄ՝ 123 000, Եվրոպա՝ 320 000, Ասիա՝ 660 000, Ամերիկա՝ 785 000, Աֆրիկա՝ 18 000, Ավստրալիա՝ 16 000: Ընդամենը՝ 6 300 000:

Հայերի թիվը Հայաստանում 1986-ի հունվարին

ՀԱՍՏ՝ 3 361 700, Երևան՝ 1 148 300, Գյումրի՝ 226 100, Վանաձոր՝ 167 300: Միջին խտությունը՝ 112,8 մարդ: 1988-ին 11 ամսվա ընթացքում ծնվել է 71498 երեխա, 12 ամսվա ընթացքում՝ 77 800: Այսինքն՝ մեկ ամսվա միջին աճը կազմել է 6 302:

1989-ին՝ դարձյալ 11 ամսվա ընթացքում՝ 67513:

Քիչ չէր նաեւ մանկական մահացությունը: Եթե ճապոնիայում մահացությունը կազմել է 1000-ից 4 երեխա, ԱՄՆ-ում՝ 9, ապա ՀԱՍՏ-ում 1988-ին՝ 20,5 (երկրաշարժի հետեւանքների հաշվառմամբ՝ 25,3), 1989-ին 11 ամսվա կտրվածքով՝ 18,9 (երկրաշարժի հետեւանքների հաշվառմամբ՝ 19,7):

1928 թ. ԼՂԻՄ-ն ուներ 224 գյուղ, որից 12-ը՝ արքեպեանքանկ, 1-ը՝ ռուսաբանկ, 1-ը՝ հունաբանկ, 4-ը՝ խաղը, 206-ը՝ հայաբանկ: Բնակչության թիվը՝ 127 000, որից 9 000 արքեպեանկ, 10 000 ռուս, մինչև 1000 հույն: Հայության թիվը՝ 107 000 (ԽՀ, 1928, թիվ 69):

1988 թ. փետրվարից մինչև 1990 թ. հունվարի վերջը Հայաստանի 18 շրջաններում վերաբնակվել է Ադրբեջանից բռնազաղծված 227 000 հայ ազգաբնակչություն: Ի՞նչ եղավ այս ժողովուրդը: Մեծ մասը հեռացավ իր հայրենիքից:

Հայր հարմարավետություն սիրող է, նկարագրով հարմարվող-համակերպվող է, ինչն էլ նրան մղում է ապահովություն ունենալու հայրենիքից դուրս:

Հայը չունի արեւելյան ժողովուրդների բնորոշ ազգային և կրոնական մոլեռանդությունը, նա ավելի անձնապաշտ է, քան



հրապարակային սիրանքի պատրաստ: Հայը կաթնամկի միայն այն ժամանակ, երբ գիտակցի իր մահապարտ դառնալու անհրաժեշտությունը:

Ինչպես մարդը հանկարծ չոգում է մտքի սնանկությունից, այնպես էլ ազգը նվազում է նվիրումի անպատրաստ որդիների խեղճությունից: Դրսիններն ու ներսիններն այնքան նսեմացրեցին Հայկի սերունդներին, որ նա անգամ իր պարզ մարդկային իրավունքների պաշտպանության համար ոտքի չի կանգնում, էլ ո՞ր մասը բողոքի, կռվի: Դարձել է չափազանց զգուշավոր, վախկոտ ու հանդուրժող: Հակառակ դեպքում մեկ կիլոգրամը շուկայում չէր դառնա 800 գրամ, չէր երթեւեկի շնչահեղձ լինելու չափ իրար վրա լցված ածաթալի պայմաններում՝ երաժշտություն կոչված խժալուր աղմուկի եւ ծխող վարորդի կշտամբանքների ուղեկցությամբ: Դիմակայության ոգին շատ թույլ է. հանկարծ փորձի որեւէ ձեռքով առարկել կամ օրինական մի բան պահանջել՝ սկսում է ինքնաստորացումից՝ վաճառողի, վարորդի ու տեսուչի առջեւ կռանալով՝ այսինքն՝ նրան դիմելով այս արտահայտություններով՝ կյանքիդ մենեն, հոգիդ մենեն, ցավդ տանեն... Միևնույն պետք է օրինական պահանջ ներկայացնել եւ քաղաքակիրթ ու արժանապատիվ վերաբերմունք: Եվ այս

պայմաններում ճանապարհային ավտոտեսուչը դառնում է լկտիության մարմնացում: Հապա մի դրանց ֆաստին կայք: Եվ չկա մեկը, որ ձեռքը խփի սեղանին ու ասի՝ այս ի՞նչ էք անում, այս ո՞րն հասանք...

Էլի հույսը հայի հայի վրա է. նրա՛, ով կընդվզի, բայց կմա մենակ, բուրդ մտքով կողմակից են նրան, բայց հրապարակավ չեն պաշտպանի, ինչո՞ւ վատամարդ դառնան: Այնքան է ստորացվել ու բարոյական ոչնչացման ենթարկվել հայրենի իշխանությունների կողմից, որ իր համար կենսակերպ է դարձրել «Լուռությունը ոսկի է» հիմար իմաստությունը:

Իսկ եթե մի գեղեցիկ օր հայի հայն էլ հոգևի ինքն իրենից ու կողքին կանգնած հային էլ երեկվա ու այսօրվա սփյուռքահայերին ասի՝ էլ չե՛մ ուզում հերոս լինել, էլ չե՛մ ուզում այս երկրի ժամապահը լինել, էլ չե՛մ ուզում հայրենասիրության բարոյական դասեր տալ իմոնց եւ ուրիշների, եկեք ինքներդ տեր կանգնեք երկրի Նաիրիի դրսի ու ներսի սահմաններին...

Լինում է նաեւ այդպես, եւ հայի հայը պարզապես դառնում է հայ, որպեսզի կարճ ժամանակ հետո դառնա սփյուռքահայ, որի արդարացումը հեռակա հայրենասիրությունն է:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ էջ 5
Այս հայ անվանումը եւ ցույց եմ տվել մ. թ. ա. III հազարամյակի կեսերի Եբրայի արձանագրություններում (Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 152), որտեղ այն գործածված է Խա-իա եւ Խա-յա (սեպագրում՝ Խա-ձ) ձևով: Նշանակում է հայ անունը Նախորդ երկու հազարամյակում գրեթե փոփոխություն չի կրել: Բանասերները հարկ եղած ուշադրության չեն արժանացրել Աշուրի թագավորի այս կարեւոր վկայությունը: Խորեզ վերաբերում է Արգիշտի Բ-ի որդուն՝ Ռուսա Բ-ին: Միևնույն Մասրիադդոնի սույն վկայությունը հույժ կարեւոր կոման է ծառայում վերջապես բացահայտելու, թե ով է ուրարտական 6 վահանների բեկորների ինչատակված Երիմենան, որին գրեթե բոլոր ուրարտագետները Ռուսա Գ-ի հայր են առանձին թագավոր են ճանաչել:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, իրար են հանդիպում մի Ռուսա թագավոր, որին իր երկրի մարդիկ հայ են կոչում եւ մի ուրիշ Ռուսա թագավոր, որը քանդակագործ վահանների բեկորների վրա կոչված է Երիմենայի որդի: Զանի որ Երիմենա անունով որեւէ թագավոր ուրարտական եւ աշուրական արձանագրություններում չի վկայված, այս պատճառով տասնամյակներ առաջ ռուս ուրարտագետ Ի. Ի. Մեշչանինովը՝ Նիկոլայու Մարի Նյանավորի աշակերտներից մեկը, Rusa Erimenahini մեկնաբանեց ոչ թե իբրեւ հայրանուն, այլ իբրեւ ցեղանուն՝ հայ կամ հայորդի՝ «Руса армянина: (И. И. Мещанинов. К анализу имени Эримена. «Язык и мышление», I, էջ

ՀԵՌԱՎՈՐ ԱՆՅՅԱԼԻ ԿՈՐՈՒՍՅԱԼ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ Ուրարտուի թագավոր Ռուսա Հայր

37-42): Չնայած Մեշչանինովի տեսակետը պաշտպանեցին եվրոպական լեզվաբանության եւ վաղնջահայերենի խոշոր հետազոտող Գ. Ջահուկյանը, ականավոր պատմաբաններ Ս. Տ. Երեմյանը եւ Գ. Տիրացյանը, սակայն այս կարծիքի դեմ դուրս եկավ Ի. Մ. Դյակոնովը եւ 1950-60-ական թվերի իր մի շարք հրապարակումներում բազմիցս կտրակա-նապես մերժեց նման մեկնաբանումը եւ համարեց այն հակազիտական՝ որեւէ պատկերացում չունենալով (կամ դիտմամբ լռության տալով) դեռեւս 1893 թվականին Կուրդուգոնի բացահայտած «Ռուսա Հայր» ուրարտական թագավորի մասին: Տավը, Դյակոնովի ժխտական կարծիքի ետևնդուն պաշտպանեց Նիկոլայ Հայրությունյանը: Այսպիսով Դյակոնովի եւ Նրա հետեւորդների ջանքերով միաձայնման անտեղի չից դարձավ Մեշչանինովի ճշգրիտ մեկնաբանումը:

Երկու տարի առաջ՝ 2015 թվականին, կողք կողքի դնելով այս երկու հաղորդում-



ները, բացահայտեցի մինչև այժմ չնկատված այն արժանալի իրողությունը, որ հանձին Երիմենայի որդի Ռուսայի, մեր առջեւ կանգնում է Ասարիադդոնի ժամանակակից Ռուսա Հայր եւ ուրարտական խնայազարդ վահանների վրա վկայված Նույն Ռուսա հայորդի (այն է՝ Երիմենահի-ն) թագավորը: Այսպիսով՝ հանձին Ռուսա Բ արքայի՝ հայ ժողովրդին եւ հանձնվել հազարամյակների նրա գոյության երկու

անձնագրերը, որոնցում Հին Արեւելքի միջազգային սեպագրերով վավերացված են հայ ինքնանունը եւ Արամե ցեղապետից ժառանգած արմեն ցեղանունը:

Այստեղից բացահայտվում է, որ Երիմենա (= ա) տառադարձումը պետք է Նույնիմաստ համարել Մե-Նուայի եւ Արգիշտի Ա-ի արձանագրություններում հիշատակված армені ցեղանվան հետ, որը դիտարկելով ընթերցվում է Մրмені, եւ դրանով աշխատում են կոծկել հայ ցեղի առկայությունը Հայկական լեռնաշխարհում մինչև մ. թ. ա. VI դարը: Միևնույն բաբելոնյան եւ աքքադերեն ավելի հին արձանագրություններում ա-

մենուրեք առկա է միայն Armi, Armani, Armanum ընթերցվածը:

Ունեց նաեւ աշխարհագրական այլ տվյալներ, որոնք Նույնքան անհերքելի հաստատում են երկու տարբեր Ռուսա թագավորների Նույնությունը, այդ փաստարկներին կանոնադառնանք այլ առիթով:

Այբերու ՄՈՒՆԵԴՅԱԼ Բանասիրական գիտ. դոկտոր

Սկիզբը՝ էջ 7

Եվ դա՝ հոգեբանորեն բարոյալքված, ազգային ինքնագիտակցությունից ու արժանապատվությունից զուրկ ու ո՛չ մարտունակ թվաքանակով թշնամուն մի քանի անգամ զինվորների, հայրենիքի արժեքը չհասկացող, հոգեբանորեն հայտնությունից հեռացած ու խորթացած օտարախոս ապիկար սպայապաշտի եւ հրամանատարության պատճառով: Պարտության մեղքը ցավալիորեն մերն է: Չարիքների այս իրողությունը Չարենցին մղել է իր անապի վիշտն ու քաղաքի բարոյալքված զինվորականության անհեթեթ պարտությունը ներկայացնել որպես անբնական հակադրություն իր ազգային երազների ու տեսլերի:

Այսօր՝ Կարսի անկումից մեկ դար հետո էլ զարմանք է պատճառում անապի այդ բերդաքաղաքի պաշտպանների հանգավոր անփութությունը: Մեր բանակը, պարզվում է, թվաքանակի, զենք ու զինամթերքի պակասությունն չի ունեցել, այլ ունեցել է մարտական ոգու եւ կռվելու կամքի պակաս, փոխանակ պաշտպանություն կազմակերպելու՝ օտարախոս հայ սպաներն զբաղված էին շրջակա գյուղերի թալանով, անգամ երկաթուղին էին գործածում թալանելու համար: Մեր զորքերը, որին գումարել է նաեւ արտաքին գործոնը՝ հայոց բանակը ներսից բարոյալքելու եւ մոսկվաներում ու Բաքվում հատուկ դաստիարակություն ստացած հայ բոլշևիկների՝ հատուկ համաշխարհային հեղափոխության, Ռուսաստանի օրինակով, Հայաստանը եւս պարտության մատնելու քայլից զործուներությունը: «Դե գերտիրության» կամ դասալքության հրահանգներում հայ բոլշևիկներն իրենց «հեղինակավոր» ստորագրություններով հավաստում էին, թե թշնամին՝ հանկուխի ջարդարար թուրքը ասկայրը՝ չէ, այլ համաշխարհային հեղափոխություն իրականացնող բոլշևիկն է, որը, իբր, գալիս էր «մեզ ազատագրելու իմպերիալիզմի լծից»: Կարմիր աստղը ճակատ

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՑՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



տին թուրք զինվոր տեսնելիս՝ «Չկրակեք մեր եղբայրների վրա», - քարոզում էր բոլշևիկյան թռչուն-կարգախոսը: Մարշալ Յովի. Բաղրամյանի հավաստմամբ՝ կարմիրբանակային համագետակ թուրքեր հայոց դեմ կռվել են նույնիսկ Սարգստապատի ճակատամարտում: Բոլշևիկները ձեռքից գցել ու խորտակել էին նույնիսկ Երեւանից Կարսին օգնության շտապող 12 կազմակերպչական հայ զինվորներով զննողը: Իր մարդկային ու զորավարական բարձրությունից, ցավով, նույնիսկ Սարգստապատի փառաբանված հերոսը՝ Դանիել Բեկ-Փիրումյանն էր իջել, ով 1919-20 թթ. եղել է Կարսի զինվորական պարտեզ: Փաստերը, որոնցով առատ են պատմագիտական աշխատություններն ու համացանցում Կարսի անկմանը վերաբերող կայքերը, իսկապես զարմացնում են իրենց անհավատարմությունը: «Պարզվում է՝ թուրքերի հարձակմանը բոլորովին անպատրաստ Կարսը, որ 1918 թ. ապրիլի 12-ին արդեն մի անգամ առանց կռվելու հանձնվել էր, 1920 թ. հոկտեմբերի 30-ից առաջ էլ ի վիճակի չէր

դիմագրավելու թշնամուն, եւ վերջին մի քանի օրում արդեն հնարավոր չէր աղետը կանխել: Ընդհակառակը՝ իրենք բարեկամ քրդերից, մոլոկաններից եւ հայ տեղեկատուներից թուրքական հետախուզությունը պարզել էր, որ Կարսը կարծես վաղուց նամակապատրաստվել էր... հանձնվելու, իսկ Կարսի անապիկության անպատրաստ ինքնավատի հայկական պատկառելի զինուժը հետախուզություն, անգամ ռազմական քարտեզներ չի ունեցել, իսկ բերդաքաղաքի ռազմական գույքը նախապես թալանել, անգամ ավտոմեքենաները գողացել, տարել են ու Թիֆլիսում ծախել: Այս ամենը դեռ այն ժամանակներում հայտնի են եղել Չարենցին, որի գրքով էլ վերածվել են գեղարվեստական պատկերի: Մի երկուսը միայն ներկայացնում են ծեր ուշադրությունը: 1920 թ. Կարս անապի բերդաքաղաքը երկրորդ անգամ էլ թշնամուն է հանձնվել համառաջ առանց կռակի:

Կրկնվում էր հայկական այլ բնակավայրերի եւ Երզնկայի ողբերգությունը, որը, 300 թնդանոթ բանակը քանի՞ զինվոր ուներ, հարցրել է Անդրանիկը:

Կրակոցի հանձնվել է թշնամուն: «Եվ մեր թնդանոթներու տեղատարափ լուռության տակ տաճիկը մտավ Երզնկա», - գրել է այդ ողբերգությունների ականատես Լեռ Կամարը: Անգլիացի փոխգնդապետ Օլիվեր Բոլդուինը, որն այդ ժամանակ ծառայում էր հայկական զինված ուժերում, իր հուշերում գրել է, թե Կարսը գրոհող թուրքերի վրա ընդամենը երկու թնդանոթից մի քանի արկ է արձակվել (տե՛ս Մելքոնյան Գ., 1920 թ. Կարսի անկման պատճառները մեր մեջ պետք է փնտրել - ոչ օտարներ): Իսկ 1921 թ. Տիրայր սրբազանը, որ Ամենայն Յայոց կաթողիկոսի կոնդակով Ամերիկայի հայ համայնքների հոգեւոր առաջնորդ էր նշանակվել, Փարիզով ԱՄՆ՝ իր պաշտոնավայրն անցնելու ճանապարհին հյուրընկալվել է Պոլոս Լուրաբի: Վերջինիս կազմակերպած պատշաճ հյուրասիրությանը պատշաճ է եղել նաեւ գորավար Անդրանիկ Օզանյանը, որը հարցնում է արեւ հայաստանյան վերջին անցուդարձերի եւ թուրք-հայկական վերջին պատերազմի հետեւանքների մասին: Որքան էլ համացանցային այդ արդյունքներով բերված փաստերը կասկածելի թվան, անգամ ո՛չ արժանաբանական կամ Զեքուրյան կարիք ունենան, ակնհայտ է, որ բնական ամրություններով առավել նպաստավոր դիրքերում գտնվող Չարենցին, որի գրքով էլ վերածվել են գեղարվեստական պատկերի: Մի երկուսը միայն ներկայացնում են ծեր ուշադրությունը: 1920 թ. Կարս անապի բերդաքաղաքը երկրորդ անգամ էլ թշնամուն է հանձնվել համառաջ առանց կռակի:

- 47 000, գորավար: - Զանի՞ գորավար եւ սպա ունեիք: - Տասի մոտ գորավարներ եւ հազարի չափ ալ այլեայլ տեսակի սպաներ: - Կարսի բերդերը քանի՞ թնդանոթ ունեին: - 300 հատ: - Որչա՞փ արագահարված (զնդացի): - Մոտավորապես 200 հատ: Կարսի բերդերն երկու թնդանոթ միայն տաք վայրկյանի չափ խոսեցան եւ հետո լռեցան. Թուրքերը եկան եւ 11 000 հայ զինվորներ վերցրին: - Թրքական ուժերը որչա՞փ էին, սրբազան: Լսած եմ, թե 8 000 հոգի եղած են, իրա՞ն է: - 7 800 հոգի եղած են ամբողջը եւ այն ալ ո՛չ կանոնավոր զինվոր» (Նույն տեղում): Զետեւանքը եղել է առավել անոթալի: Պարզվում է՝ Կարսի անկումով գերի են ընկել հայկական բանակի երկու գեներալ, ազգային ժողովի չորս պատգամավոր, թուրքերը սրի են քաշել բնակչության մեծ մասին, մյուսներն էլ թշնամուն Երզնկա՝ տաճանակիր աշխատանքների (Նույն տեղում): Այս տեղեկություններն ազգային մեծ հերոսի՝ Հայաստանի Հանրապետության իշխանություններից վիրավորվելով՝ հայրենիքից հեռացած, «հայրենիքի տեր ու պաշտպան» գորավար Անդրանիկի համար եղել են ոչ միայն ցավալի: Իսկ ի՞նչ խոհեր ու զգացումներ պիտի ունենար հայրենի քաղաքը եւ մարմնավորված այնքան բաղձալի երազը՝ իր իսկ քնորոշումով՝ Նաիրապետությունը կորցրած բանաստեղծը...

Շարունակելի
Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 7

Երբ հայերը կորցնում են իրենց ծագումնաբանական հիշողությունը, մնում են նախնիներից ժառանգություն մնացած ինչ-ինչ իրեր ու պատմություններ, ծեռագիր մի մատյան կամ Ավետարան, լուսազարե ու անուկներ, ինչը եւ առիթից առիթ ցանկություն է առաջացնում հանրագիտարաններում որոնելու «Հայաստան» բառահոգվածը կամ քարտեզի վրա գտնելու Հայաստանի տեղը:

Իսկ երբ հայերը դադարում են կարոտել, երբ հեռանում են մայրենի լեզվից, կավատից, ազգային ոգուց, ազգային հիշողությունից, ավանդույթից ու սովորույթից, երբ մոռանում են իրենց ծագումնաբանությունը եւ քարտեզի վրա դժվարությամբ են գտնում Արարատի տեղը, նրանք այլեւս հայեր չեն... Վաղուց արդեն հայեր չեն...

Նրանցից նշանավորներին սուկ հիշում են հայրենիքում, անգամ պարծենում, անգամ հպարտանում, որ ուրիշ ազգերին ծառայած այսինչ գորավարները, գիտականները, ուրիշի բեմերում են ուրիշի երգեր երգած այսինչ երգիչները, նաեւ դեռասանները ծագումով հայեր են: Այդպիսիների համար մեծ միջոթարանք է անգամ այն, որ նրանք՝ այդ այլասերվածները, գոնե հիշել են իրենց ազգային ծագումը: Բայց սա ամենեւին էլ վերջը չէ:

ՀԱՅԻ ՀԱՅԵՐ



Որքան էլ հայը դառնա ռուս, ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, լեհ, ումիլացի, իսկ, թուրք, քուրդ, վրացի, այնուամենայնիվ, խորքի խորունկ մի շերտում հիշում է իր հայկական ծագման առասպելը: Այդպես Նոյյան տապանն իջավ Արարատից եւ շարունակվեց մարդկային քաղաքակրթությունը: Հայաստանն այսօր դարձել է Նոյյան տապանի պես մի

բան, որտեղից աշխարհով մեկ հեռանում են Արարատի որդիները: Եվ այդպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած եւ ժամանակակից երկիր: Երկիր, որի համար թանկ են իր որդիները:

Այդ հույսն ու հավատն իր մեջ պահում է ոչ թե հայը, ով ենթակա է ամեն տեսակի ազգակործան գաղթակցություններին,

այլ հայի հայը, նա՛, ով, հակառակ պատմության հոգների ու փորձրիկների, շարունակում է իր արմատները մխրճած պահել այս դժվար, այս չափազանց դժվար, բայց առասպելական ու երանելի հողի մեջ...

Դավիթ ՉԱՄՊՐԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաքային

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Երիտմուշկ Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝ krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 20.7.2017 թ.

Տպաքանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ